Ծանոթություն ԵՄ - ի աջակցության և զարգացման ծրագրերին Հայաստանում

Սեպտեմբեր 2011

Ներածություն

Այս հոդվածը նվիրված է Հայաստանում ԵՄ - ի զարգացման ծրագրերի լուսաբանմանը և պարզաբանում է ԵՄ-ի համագործակցության մեխանիզմները Արևելյան Եվրոպայի հարևանների նկատմամբ: Հոդվածի առաջին հատվածը ընդհանուր տեղեկություններ է տալիս Եվրոպայի հարևանության քաղաքականության մասին, որի շրջանակներում ԵՄ-ը աջակցություն է ցույց տալիս Հայաստանին: Այնուհետև ներկայացվում են Արևելյան գործընկերության ընձեռած նոր հնարավորությունները: Հոդվածը լուսաբանում է այն իրավական, քաղաքական և ֆինանսական գործիքները, որոնց միջոցով իրականացվում է Եվրոպայի հարևանության քաղաքականությունը՝ նկարագրելով ֆինանսավորման բաշխման մեթոդը: Այն ներկայացնում է Հայաստանում ներկայումս իրականացվող ծրագրերի ցանկը՝ բերելով այդ ծրագրերի շրջանակներում ֆինանսավորված միջոցառումների հստակ օրինակներ: Բացի այդ հոդվածը պարզաբանում է Հայաստանում ԵՄ-ի կողմից ֆինանսավորված ծրագրերի հստակ նպատակներն ու խնդիրները:

Ընդհանուր տեղեկություններ

2004 թ.-ի ընդլայնումից հետո Եվրամիությունը իր նոր արևելյան և հարավային հարևանների[1] հետ համագործակցության նոր քաղաքականություն մշակեց, որի հիմքում ընկած էր ավելի սերտ երկկողմ կապերի հաստատման և բոլոր ներգրավված կողմերի բարգավաճման, կայունության և անվտանգության ապահովման գաղափարը:[2] **Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ)** ընդգրկում է ԵՄ-ի տասնվեց մերձավոր հարևաններին՝ Մոլդովա, Բելառուս, Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ալժիր, Եգիպտոս, Իսրայել, Հորդանան, Լիբանան, Լիբիա, Մարոկկո, Սիրիա, Թունիս և Պաղեստինի գրավված տարածքը: ԵՀՔ-ի նպատակն է «արտոնյալ հարաբերություններ» ստեղծել ԵՄ-ի և յուրաքանչյուր գործընկեր երկրի միջև: ԵՀՔ-ը հիմնված է մի շարք ընդհանուր արժեքների

[1] http://ec.europa.eu/world/enp/pdf/com03_104_en.pdf, (5 Մայիսի 2011):

[2] http://ec.europa.eu/world/enp/policy_en.htm, (5 Մայիսի 2011):

(ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, օրենքի գերակայության, լավ կառավարում, շուկայական տնտեսության սկզբունքներ և կայուն զարգացում) վրա: ԵՀՔ-ի մեկնարկին հետևեցին մի շարք այլ տարածաշրջանային և բազմակողմ քաղաքական նախաձեռնություններ, որոնք ստեղծվեցին միևնույն հովանու ներքո: Դրանք են՝ **Միջերկրածովյան միությունը** (2008 թ.), **Արևելյան գործընկերությունը** (ԱԳ) (2009 թ.), որի անդամներն են Հարավային Կովկասի երեք երկրները, Բելառուսը, Մոլդովան և Ուկրաինան, **Սևծովյան համադաշնեցման նախաձեռնությունը** (2008 թ.), որը ներառում է Սևծովյան տարածքի շրջակա երկրները (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա, Ռուսաստան, Թուրքիա և Ուկրաինա): Նման բախշումը արտացոլում է աշխարհագրական տարբերակումը հարավային ոչ եվրոպական գործընկերների (ովքեր միշտ կմնան հարևաններ) և արևլյան գործընկերների միջև, ովքեր Եվրոպական մայրցամաքի մասն են կազմում և, հետևաբար, հատուկ նշանակություն ունեն ԵՄ-ի համար՝ քաղաքական տեսանկյունից:

Արևելյան գործընկերությունը ԵՄ-ի մինչ օրս ներկայացրած ամենալուրջ նախաձեռնությունն է արևելյան գործընկերների հանդեպ՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ինտեգրման առումով: Արևելյան գործընկերության վերաբերյալ իր հռչակագրում Եվրամիության խորհուրդը հայտարարել է, որ «երկու երկրների միջև համագործակցությունը պետք է հիմք հանդիսանա նոր Ասոցացման համաձայնագրերի համար, որոնք կկնքվեն ԵՄ-ի և այն գործընկերների միջև, ովքեր բավարար առաջընթաց կցուցաբերեն 2-րդ հոդվածում ամրագրված սկզբունքների և արժեքների պահպանման բնագավառում, և ովքեր ցանկանում են և ի վիճակի են կատարել համաձայնագրի արդյունքում ստանձնած պարտավորությունները, այդ թվում նաև խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծումը»:[3] Արևելյան գործընկերների հետ հարաբերությունների ԵՄ-ի այս նոր ձևաչափը ավելի շոշափելի քաղաքական ներգրավվածության, ԵՄ-ի շուկա աստիճանական ինտեգրման, վիզաների ազատականացման և Խորը ու համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման հնարավորություն է ընձեռում: Հայաստանը Ասոցացման համաձայնագրի բանակցությունները ԵՄ-ի հետ սկսել է 2010 թ.-ի հուլիսի 19-ին: Բանակցող կողմերը հետևյալ սկզբունքներով են առաջնորդվում՝ համատեղ սեփականություն և ներգրավվածություն բոլոր գործընկերների համար, տարբերակում՝ հիմնված յուրաքանչյուր գործընկերոջ հստակ կարիքների և նպատակների վրա, և

[3] http://register.consilium.europa.eu/pdf/en/09/st07/st07880-re01.en09.pdf, (10 Մայիսի 2011):

պայմանականություն՝ կապված համապատասխան քաղաքական, առևտրատնտեսական և տնտեսական չափանիշների կատարման հետ:[4]

Իրավական, քաղաքական և ֆինանսական գործիքներ

Նախքան ԵՀՔ-ի ստեղծումը հարևան երկրների մեծ մասը արդեն որոշակի իրավական համագործակցության մեջ էին ԵՄ-ի հետ՝ **Գործընկերություն և համագործակցություն համաձայնագրերի (ԳՀՀ)** շրջանակներում: Հայաստանը ստորագրել է ԳՀՀ-ը ԵՄ-ի հետ 1996 թ.-ին, որն ուժի մեջ է մտել 1999 թ.-ին: ԵՀՔ-ն նոր քաղաքական խթան հաղորդեց ԵՄ - Հայաստան հարաբերություններին, որն ամրագրված է **Գործողությունների ծրագրի (ԳԾ)** մեջ, մի փաստաթուղթ, որը կարգավորում է ԵՄ - Հայաստան երկկողմ հարաբերությունները և հիմնական թիրախներն է սահմանում համագործակցության առաջնային բնագավառներում: Գործողությունների ծրագիրը ԵՀՔ-ի աշխատանքային և ուղեցուցային գործիքն է:[5] Այն ամփոփում է հինգ տարվա գործողությունների ուղեցույցը և պարբերաբար վերանայվում է՝ ձեռքբերումների գնահատման և բարելավմանն ուղղված խորհուրդներ տալու համար: Վերանայման արդյունքները հրապարակվում են **ընթացիկ զեկույցներում**: ԵՄ – Հայաստան Գործողությունների ծրագիրը ընդունվել է 2006 թ. նոյեմբերին, և արդեն վերանայվել է երեք անգամ (2007, 2008 և 2009թթ.): Հայաստանի պետական կառավարման մարմիններին ԳՀՀ և ԳԾ-ի իրականացման հարցում աջակցություն ցույց տալու նպատակով ստեղծված Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի գործունեության ժամկետը 2009 թ.-ին երկարացվեց ևս 24 ամսով:

Ֆինանսական տեսանկյունից, յուրաքանչյուր շահառու երկիր Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ մշակում է **Երկրի ռազմավարական փաստաթուղթը (ԵՌՓ)**: Հիմնվելով գործողությունների ծրագրի վրա՝ այս փաստաթուղթը սահմանում է ԵՄ-ի աջակցության

[4] http://register.consilium.europa.eu/pdf/en/09/st07/st07880-re01.en09.pdf, (10 Մայիսի 2011):

[5] http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/political_framework/index_en.htm (10 Մայիսի 2011):

ընդհանուր նպատակները՝ ներառելով իր բոլոր գործիքներն ու ծրագրերը:[6] Հայաստանի ներկայիս ԵՌՓ-ն ընդգրկում է 2007-2013 ժամանակահատվածը և 98,4 մլն. € ֆինանսավորում է հատկացնում:[7] **Ազգային ինդիկատիվ ծրագիրը** ԵՌՓ-ի լայն նպատակները վեր է ածում կոնկրետ գործողությունների: Հայաստանի առաջին ազգային ինդիկատիվ ծրագիրը ընդունվել է 2007-2010 ժամանակահատվածի համար: Երկրորդ ազգային ինդիկատիվ ծրագիրը ընդգրկում է 2007-2013 ժամանակահատվածը և 157,3 մլն. € ֆինանսավորում է հատկացնում: Ազգային ինդիկատիվ ծրագրում ամրագրված նախաձեռնությունները ֆինանսավորվում են **Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (ԵՀԳԳ)** միջոցով, որը ստեղծվել է 2006 թ-ին ֆինանսական օգնության կարգի պարզեցման նպատակով: Նախկինում, այդ ընթացակարգերը մասնատված էին՝ ըստ տարբեր ծրագրերի՝ ՄԵԴԱ (Միջերկրածովյան երկրների համար) և ԹԱՍԻՍ (Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար): ԵՀՔԳ-ի շահառուներն են են հարևան երկրները և Ռուսաստանը (որի հարաբերությունները ԵՄ-ի հետ այլ կարգավիճակ ունեն):

ԵՄ-ի իրականացրած ծրագրերը Հայաստանում

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը լայն ֆինանսական միջոց է: Այն ծրագրեր է իրականացնում համագործակցության տարբեր ոլորտներում: Ստորև բերված է Հայաստանում իրականացվող ծրագրերի ցանկը՝

- **Միջսահմանային համագործակցություն:** Հայաստանը մասնակցում է Սևծովյան ծրագրին, որը նպատակ ունի կապեր հաստատել մասնակից երկրների միջև և ամրապնդել նրանց համագործակցությունը: Այս ծրագրի առաջնահերթություններից են տնտեսական զարգացումը, շրջակա միջավայրի պահպանությունը և մշակութային համագործակցությունը: ԵՀԳԳ բյուջեից ծրագրի համար հատկացվել է 21,296,515 € սկզբնական փուլի համար (2007-2013 թթ.): Ծրագրերր և ֆինանսավորման տեղաբաշխման ճշգրիտ մանրամասները դեռևս չեն հրապարակվել:

[6] http://ec.europa.eu/world/enp/pdf/country/2011_enpi_nip_armenia_en.pdf, (19 Օգոստոսի 2011):
[7] http://ec.europa.eu/world/enp/pdf/country/2011_enpi_nip_armenia_en.pdf, (19 Օգոստոսի 2011):

- **Հարևանության ներդրումային ծրագիր**: Այն ընդգրկում է մեծ ֆինանսավորում պահանջող ենթակառուցվածքային ծրագրեր և աջակցում է մասնավոր հատվածին:[8] Մինչ օրս 2 ծրագիր է հաստատվել Հայաստանի համար՝ Հարևանության ներդրումային ծրագրի շրջանակներում:
    - **Երևանի մետրոպոլիտենի վերականգնողական աշխատանքներ**: Այս ծրագիրը ներկայացվել է ՎԶԵԲ- ի (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ) և ԵՆԲ-ի (Եվրոպական ներդրումային բանկ) կողմից: Այն հաստատվել է 2009 թվականի մայիսին և դեռևս ընթացքի մեջ է: Ծրագրի համար նախատեսված է 16,7 մլն. €, որից 5 մլն. € տրամադրում է Հարևանության ներդրումային ծրագիրը, և մնացած 5 մլն. € ՎԶԵԲ-ն:[9]
    - **Փոքր համայնքների ջրամատակարարման ծրագիր**: Այս ծրագիրը նույնպես ներկայացված է ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի կողմից: Ծրագրի ընդհանուր արժեքը 21,2 մլն. € է, որից 7,6 մլն. € տրամադրում է Հարևանության ներդրումային ծրագիրը, իսկ մնացած 6,5 մլն. € ԵՆԲ-ն և ՎԶԵԲ-ն: Այն վերջնականապես ընդունվել է 2011 թ.-ի հունվարին և մեկնարկել է 2011 թ.-ի հուլիսին: Այն նպատակ ունի բարելավել ջրամատակարարումը փոքր համայնքներում և թարմացնել ջրի մաքրման հին կայանները:[10]

Հարևանության ներդրումային այլ ծրագրերը դեռևս նախնական ընտության փուլում են գտնվում: Դրանցից են Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների երկրորդ փուլը (վերջին վերանայումը՝ 2010թ.-ի մարտ), Կոտայք մարզի կոշտ թափոնների ծրագիրը (վերջին նախնական ընտրությունը՝ 2010 թ.-ի նոյեմբեր) և աղբահանության ծրագիրը (վերջնական պատասխանը սպասվում է 2011 թ.-ի ապրիլից): Բացի այդ, 2009 թ-ին Վրաստանում մեկնարկել է Սև ծովի էներգետիկ փոխանցման համակարգ 260 մլն. € արժողությամբ ծրագիրը, որի նպատակն է կայունացնել երկրի էլեկտրաէներգիայի բաշխիչները: Ծրագրի իրականացման արդյունները ակնկալվում են ողջ տարածաշրջանում, ինչպես նաև Հայաստանում:

[8] http://ec.europa.eu/europeaid/where/neighbourhood/regional-cooperation/irc/investment_en.htm, (11 Մայիսի 2011):

[9] http://www.ebrd.com/english/pages/project/psd/2009/39815.shtml, (18 Մայիսի 2011):

[10] http://www.ebrd.com/english/pages/project/psd/2011/40718.shtml, (30 Օգոստոսի 2011):

- **Կառավարման սատարում:** Պետական բյուջեի բոնուս, որը շնորհվում է այն երկրներին, որոնք հատուկ ջանքեր են գործադրել իրենց գործողությունների ծրագրի պահանջները իրականացնելու ուղղությամբ: Այս լրացուցիչ ֆինանսավորման նպատակն է խրախուսել ներքին բարեփոխումների գործընթացը՝ պայքարելով կոռուպցիայի դեմ, խթանելով թափանցիկությունը, մարդու իրավունքների և օրենքի գերակայությունը, աջակցելով մրցակցությանը և շուկայական տնտեսության ամրապնդմանը: Նշանակալից է, որ ԵՄ-ը հատկապես բարձր է գնահատել Հայաստանի առաջընթացը կոռուպցիայի դեմ պայքարում, ԵՄ-ի հաստատությունների հետ մարդու իրավունքների վերաբերյալ երկխոսությունը, Մարդու իրավունքների պաշտպանի դերը, և 2008 թ.-ի ներքին քաղաքական ճգնաժամի հետևանքների վերջին քննությունը:[11] Այս շրջանակներում Հայաստանը դարձավ առաջին երկիրը, որտեղ ուղարկվեց **ԵՄ խորհրդատվական խումբը**՝ բարձր մակարդակի ԵՄ խորհրդատուների մի թիմ: Վերջինս աջակցում է տեղական բարեփոխումների իրականացմանը վերոնշյալ ոլորտներում և նպաստում է ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման գործընթացին, ինչպես նաև ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի բանակցություններին:
- **Թայեքս (Տեխնիկական աջակցություն և տեղեկատվության փոխանակում), Թվիննինգ և Սիգմա (Աջակցության բարելավում և կառավարման իրականացում):** Թայեքս և Թվիննինգ ծրագրերի շրջանակներում ԵՄ անդամ պետությունների պաշտոնատար անձինք մեկնում են շահառու երկիր պետական կառավարման մարմինների հետ համագործակցության խթանման և իրավաբանական խորհրդատվության մատուցման նպատակով:[12] Թվիննինգ ծրագրերը Հայաստանում իրականացվում են 2007 թվականից, որոնց ընդհանուր բյուջեն կազմել է 11,5 մլն. €:[13] Ներկայումս Հայաստանում 13 Թվիննինգ ծրագրեր դեռևս ընթացքում են: Դրանք գտնվում են իրականացման տարբեր փուլերում և ընդգրկում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են շրջակա միջավայրի պաշտպանությունը (1մլն. € արժողությամբ նախագիծը աջակցում է բնապահպանության նախարարությանը Աղտոտվածության կանխարգելման և հսկողության ինտեգրալ համակարգի ներկայացման գործում), մարդու իրավունքները (2009թ.-ին 1 մլն. € հատկացվել է

[11] http://ec.europa.eu/world/enp/pdf/progress2010/sec10_516_en.pdf, (19 Մայիսի 2011):

[12] http://ec.europa.eu/europeaid/where/neighbourhood/overview/twinning_en.htm, (12 Մայիսի 2011):

[13] http://eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu_armenia/newsletter_n1_eng.pdf, (12 Մայիսի 2011):

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ամրապնդման համար), զբոսաշրջությունը, քաղաքացիական ավիացիան, բիզնեսը (2009 թ-ին 1,1 մլն. € հատկացվեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կարգավորող կառավարման ծրագրի ներկայացման համար) և տարածքային զարգացումը (2003 թ.-ից ԵՄ-ն աջակցում է Արարատ և Վայոց Ձոր մարզերի տնտեսական զարգացմանը): Վերջին Թվինինգ ծրագիրը, որը մեկնարկել է 2008 թ.-ին, 2 մլն. € է հատկացրել Հայկական ազգային վիճակագրական ծառայությանը՝ Հայաստանի համապատասխան օրենսդրությունը ԵՄ-ի հետ ներդաշնակեցման համար, և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին՝ Հայաստանում ուժեղ մրցակցության քաղաքականության իրականացման համար: 2006 թ.-ից ի վեր՝ ուսումնական այցեր և առաքելություններ նախատեսող գրեթե 50 ծրագրեր են կազմակերպվել Հայաստանում Թայեքս հովանու ներքո՝ ԵՄ-ի անդամ երկրներից համապատասխան փորձ ներմուծելով այնպիսի առանցքային ոլորտներ, ինչպիսիք են պարենային անվտանգությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկ արդյունավետությունը և դատական վիճակագրությունը:

ՍԻԳՄԱ-ն, որը ԵՄ – ՏՀԶԿ (տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) համատեղ նախաձեռնություն է, նպատակ ունի աջակցել պետական կառավարման բարեփոխումներին շահառու երկրներում: Այն գործում է Հայաստանում 2008 թ.-ից, և մինչ օրս հինգ նախագիծ է իրականացրել պետական գնումների, ֆինանսական վերահսկողության, պետական կառավարման, հանրային - մասնավոր համագործակցության և լիցենզավորման ոլորտներում:

Հայաստանում միջսահմանային համագործակցության, Թայեքս և Սիգմա ծրագրերի իրականացմանը աջակցելու համար 2008 թ.-ին ծրագրի կառավարման գործակալություն է ստեղծվել՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո:

ԵՄ-ի արտաքին համագործակցությունը ԵՀՔԳ-ից բացի իրականացվում է նաև այլ մեխանիզմների միջոցով, որոնք ուղղված են որոշակի ոլորտներին և գործում են ողջ աշխարհում: Դրանցից երեքը գործում են նաև Հայաստանում:

- **Միջուկային անվտանգության համագործակցության ծրագիրը** իրականացվում է 2007 թ.-ից, որի միջոցով ԵՄ-ը աջակցություն է տրամադրում Հայաստանի միջուկային անվտանգության ապահովմանը: Որոշ ծրագրեր մեկնարկել են մոնիտորինգի, ուսումնասիրությունների, ճառագայթային պաշտպանության բնագավառներում և դեռևս ընթացքի մեջ են: Այս ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմում է ավելի քան 7 մլն. €: Այս ծրագրերն են՝ «Բորի կուտակման և նեյտրոնային հոսքի համակենտրոնացման մոնիտորինգի համակարգեր – Մեծամորի ԱԷԿ» ծրագիր (€ 1,813,107), «Ճառագայթային պաշտպանության համակարգի թարմացում Մեծամորի ԱԷԿ-ի համար» ծրագիր (€ 1,299,928) և «Առաջնային օղակի ծառայության տեսչություն - Մեծամորի ԱԷԿ» ծրագիր (€ 749,860):[14] Միջուկային անվտանգության համագործակցության ծրագրի առաջնային նպատակն է ապահովել Մեծամորի ատոմակայանի անվտանգ շահագործումը: Ի սկզբանե՝ հատկացվել է € 350,000 բյուջե Խողովակների ամբողջականության ապահովման համար,[15] իսկ վերջերս նոր ծրագրի մրցույթ է հայտարարավել Միջուկային նյութերի հաշվապահական հաշվառման և վերահսկման համար:
- **Տեմպուս և Էրազմուս Մունդուս**: Այս ծրագրերի միջոցով ԵՄ-ը ձգտում է զարգացնել կրթությունը հարևան երկրներում: Տեմպուս ծրագրի միջոցով համագործակցություն է հաստատվում ԵՄ-ի և հարևան երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև: Այն նպատակ ունի նաև արդիականացնել բարձրագույն կրթությունը գործընկեր երկրներում: Միաժամանակ Տեմպուսի նպատակն է մերձեցնել ԵՄ-ի և հարևան երկրների կրթական համակարգերը՝ ներմուծելով Բոլոնիայի գործընթացը բոլոր երկրներում: Տեմպուս ծրագրի բյուջեն 2010 թ.-ին կազմել է € 150,000:[16] Էրազմուս Մունդուս ծրագիրը խթանում է ուսանողների և գիտական անձնակազմի շարժունակությունը, մարդկանց և մշակույթների միջև երկխոսությունը և փոխըմբռնումը, և բարձրացնում է կրթության որակը: Բացի այդ, ԵՄ և հարևան երկրների միջև շարժունակության բարձրացման միջոցով այն նպաստում է մարդկային ռեսուրսների զարգացմանը և հրարավորություն է ընձեռում երրորդ երկրների

[14] http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list_of_projects/projects_en.htm, (23 Մայիսի 2011):

[15] http://armenia.eubusinessgrants.com/tender/286_pipe_integrity_design_a10107a1a_for_armenian_npp_metsamor.html, (29 Օգոստոսի 2011):

[16] http://tempus.am/index.php?option=com_content&view=article&id=1257&Itemid=605, (25 Օգոստոսի 2011):

բարձրագույն ուսումնական հաստատություններին միջազգային համագործակցություն ծավալել:[17]

- **Ժողովրդավարության և մարդու իրավունքների խթանման եվրոպական գործիք:** Այս գործիքը խթանում է ժողովրդավարությունը և մարդու իրավունքները քաղաքացիական հասարակության հետ աշխատանքի միջոցով: Հայաստանում այս գործիքով ֆինանսավորված ծրագրեր իրականացվել են 2003 թ.-ից, երբ առաջին անգամն. € 500,000 դրամաշնորհ է հատկացվել տեղական շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններին: ԵՄ-Հայաստան համագործակցությունը մարդու իրավունքների ոլորտում շարունակվել է հատկապես երեխաների պաշտպանության և քրեական արդարադատության ոլորտներում: Հայաստանը նաև օգտվում է Ժողովրդավարության և մարդու իրավունքների խթանման եվրոպական գործիքից տարածաշրջանային մակարդակով: ԵՄ-ը ջանքեր է գործադրում երկխոսության խթանման և փոխըմբռնման բարձրացման համար ողջ Հարավային Կովկասում: Նման ծրագրերի օրինակ է հանդիսանում «Հարավային Կովկասի միջնորդություն և երկխոսություն նախաձեռնությունը խաղաղության ապահովման համար» (1,87 մլն. €), որը մեկնարկել է 2009 թ-ին և ներառում է Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան և Հարավային Օսիան:[18] Մեկ այլ օրինակ է «Հարավային Կովկասի տարածաշրջանում կանանց դերը խաղաղաշինության մեջ» ծրագիրը, որը նույնպես մեկնարկել է 2010թ-ին 1,32 մլն. € բյուջեով:[19]

  Մարդու իրավունքների միջազգային ցանց զորակոչիկների համար ծրագիրը իրականացվում է Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի հետ համատեղ և ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից (1.34 մլն. €):[20]

[17] http://eacea.ec.europa.eu/erasmus_mundus/programme/about_erasmus_mundus_en.php, (25 Օգոստոսի 2011): http://ec.europa.eu/education/external-relation-programmes/doc70_en.htm, (25 Օգոստոսի 2011):

[18] http://eeas.europa.eu/delegations/georgia/documents/projects/overview_post_conflict_ec_assistance_may10_en.pdf, էջ 7 (25 Օգոստոսի 2011):

[19] http://www.care-caucasus.org.ge/en/main.php?id=1266845296, (25 Օգոստոսի 2011):

[20] http://ec.europa.eu/europeaid/what/human-rights/documents/contracts_table_2009_for_publication_for_website_en.pdf, (25 Օգոստոսի 2011):

2011 թ-ի ապրիլին Եվրոպական հանձնաժողովը և Հայաստանի կառավարությունը համաձայնության են եկել համատեղ մշակել Գործընկերություն հանուն բարեփոխումների ծրագիրը, որը կաջակցի Հայաստանի քաղաքական և տնտեսական բարեփոխումներին՝ ԵՄ-ի Արևելյան գործընկերություն ծրագրի շրջանակներում:[21] Եվրամիության և Հայաստանի պաշտոնյաները մշակել են մի փաստաթուղթ, որը ներառում է 2011-2013 թթ. կայանալիք բարեփոխումների ծրագիրը: Փաստաթուղթը դեռևս չի հրապարակվել: ԵՄ-ը խոստացել է Հայաստանին տրամադրել 157 մլն. € ծրագրի իրականացման համար:[22]

Վերջաբան

ԵՄ-ի աջակցության վերը նշված գործիքները, որոնք կիրառվում են Հայաստանում, շատ բազմաբնույթ են և բավական պրագմատիկ երկրի ընթացիկ փոփոխությունների արդյունքում ծագած մարտահրավերների հաղթահարման համար: ԵՄ-ը արդարացիորեն կարող է համարվել երկրում մարդու իրավունքների, ժողովրդավարության, շրջակա միջավայրի պահպանության, լավ կառավարման ոլորտներում հիմնական բարեփոխումների և ներդրումների աղբյուրը: Սակայն այս ծրագրերից ոչ մեկը չէր կարող իրականացվել, եթե Հայաստանը պատրաստակամություն չհայտներ տվյալ ճանապարհով վարել իր քաղաքականությունը: Հայաստանը ընտրել է այս ճանապարհը, ոչ միայն Եվրոպային զուտ գոհացնելու նպատակով, այլև հասկանալով այս բարեփոխումների և ներդրումների արժեքն ու կարևորությունը: Այնուամենայնիվ, որոշ ոլորտներում ԵՄ-ի նպատակները չեն համընկնում Հայաստանի կառավարության նպատակների հետ: Այս դեպքում օգտակար են խորհրդատվության և բանավեճի մեխանիզմները: Եվրամիություն - Հայաստան հարաբերությունների հաջորդ կարևոր փուլը Ասոցացման համաձայնագրի կնքումն է: Վերջինս աննախադեպ ելակետ կհանդիսանա Հայաստանի եվրաինտեգրման գործընթացում: Այն կխթանի Հայաստանի, Հարավային Կովկասի և ԵՄ-ի կայունությունը և հետագա առաջընթացը:

[21] http://www.mfa.am/u_files/file/docs/declaration_eng.pdf, (25 Օգոստոսի 2011):

[22] http://www.yerevanreport.com/3406/eu-finance-armenian-reform-plan/, (25 Օգոստոսի 2011):